ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

No 732-Լ/Գ <<28>> նոյեմբերի 2017թ.

<<ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՀԻՄՆԱՐԿԻՆ ՓՈՐՁՆԱԿԱՆ /ՊԻԼՈՏԱՅԻՆ/՝ 3 ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ, ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ, ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ՝ 041301.007-<<ԿԱՌԱՎԱՐՈՒՄ>> (041301.04.7-<<ԳՈՐԾԱՐԱՐ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ /ԿԱՌԱՎԱՐՈՒՄ/>>) ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009թ. հուլիսի 9-ի N 808-Ն որոշմամբ հաստատված հավելված N 19-ի 10-րդ կետի պահանջներով, ՀՀ կառավարության 2010 թվականի փետրվարի 11-ի N 124-Ն որոշմամբ հաստատված հեռավար ուսուցման կարգի, 2010 թվականի օգոստոսի 27-ի N1348-Ա/Ք հրամանով հաստատված մեթոդական ուղեցույցի պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. << ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ>> հիմնարկին փորձնական /պիլոտային/՝ 3 տարի ժամկետով, տալ մագիստրոսի կրթական ծրագրով, հեռավար ուսուցմամբ, ուսուցման 2,5 տարի տևողությամբ, ըստ կուրսերի սովորողների նախատեսվող սահմանային 50-ական տեղերով՝ 041301.04.7-<<Կառավարում>> (կրթական ծրագիր՝ 041301.04.7-<<Գործարար վարչարարություն /կառավարում/>>) մասնագիտության գծով գործունեության թույլտվություն:

2. Սույն հրամանի կատարման կազմակերպումը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի լիցենզավորման գործակալության պետ Մ. Մովսիսյանին:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ Մ.Մկրտչյանին:

?????? ????????
Jun 28 2017 1:06 PM +04:00

/ ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ